



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Ապրիլ 26, 1990

Բարեջնորհ  
Սերոբ Արկ. Ալճալեան  
Հոգևոր Մատակարար  
Ա. Տարութիւն Եկեղեցւոյ  
Սաութ Միլուոքի.

Սիրելի Սերոբ Սարկաւագ,

Ստացուած է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղուած Փետրուար 22, 1990 թուակիր ձեռ  
նամակը:

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Փետրուար 11-ին, 1990, տեղի ունեցած է համայնքիդ  
Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի չորս  
անդամները: Կու տաք բուեարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու  
վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի  
հետեւեալ անդամներու ընտրութիւնը. իսկ համայնքիդ յետնեալ տուրքերու հարցը կը քննուի  
Թեմական Խորհուրդին կողմէ.

Սքաթ Իրիք  
Ճէնիս Իրիք  
Ռոզ Հուտա  
Քաթի Բէյիշեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դիկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի  
անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր  
աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

*Խաճուկ Վրդ. Պարսամեան*

Խաճուկ Վրդ. Պարսամեան  
Առաջնորդի Փոխանորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 670  
Դեկտեմբեր 4, 1991

Մեծայարգ  
Տիար Էլիըթ Քաշեան  
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Սաութ Միլուոքի.

Յարգելի Տիար Քաշեան,

Նկատի ունենալով որ համայնքիդ պատգամատրի պաշտօնավարութեան շրջանը լրացած է, համաձայն Թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներուն՝ պէտք է նոր պատգամատրի եւ անձնափոխանորդի ընտրութիւն կատարուի համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովին ընթացքին:

Բարի եղէք մինչեւ Փետրուար 17, 1992, նորընտիր պատգամատրին անունն ու հասցէն ղրկել Առաջնորդարան: Անոր ընտրութիւնը պիտի վաւերացուի 90-րդ Տարեկան Թեմական Պատգամատրական Ժողովի ընթացքին, որ տեղի պիտի ունենայ Ապրիլ 30-էն Մայիս 2, 1992, հիւրընկալութեամբ Պոզա Ռաթոն Ճլորիտայի Ս. Դաւիթ Եկեղեցւոյ:

Կը ներփակենք օրինակը վկայագրին (Հայերէն եւ Անգլերէն լեզուներով), որով կը հաստատուի ինքնութիւնը համայնքիդ պատգամատրին: Այս վկայագիրը պէտք է ստորագրուի Հոգեւոր Հովիին, Ծխական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ, եւ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ ղրկուի Առաջնորդարան:

Զեզի եւ Ծխական Խորհուրդիդ անդամներուն կը մաղթենք քաջառողջութիւն եւ աստուածահաճոյ ձեր աշխատանքներուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ